

ԱԶԳԱՍՄԱՐՏԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՂԱՐԱՔԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԲԱՆԱՀԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

1988-ին Ղարաբաղում սկսված ազգային-ազատագրական պայքարը վճռական ազդեցություն ունեցավ ինչպես ողջ հայ, այնպես էլ, և հատկապես, երկրամասի ժողովրդի հոգևոր մշակութի վրա: Հայ ժողովրդական բանահյուսությունը ևս ունեցավ յուրահատուկ դրսևորումներ: Բանահյուսության ավանդական ժանրերը մղվեցին ետ, կաթն է քե մոռացության տրվեցին: Հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող սրընթաց փոփոխությունները նոր պահանջներ էին առաջադրում: Ըստ աղմ վերականգնացան, վերականգնվեցին հին, գրեթե մոռացված, սակայն նոր պահանջմունքները գոհացնող ստեղծագործություններ, ապա ստեղծվեցին ժողովրդի կյանքում կատարվող տեղաշարժերն ու խրադարձություններն արտացոլող գործեր: Ըստ հավաքած նյութի և տարակուսումների, այս երկու միտումն առկա են միևնույն ժանրի շրջանակներում և բնորոշ գերազանցապես երգերին ու ոչ հեքիաթային արձակերին՝ զվարճախոսություններին, զրույցներին ու հուշապատումներին:

Տամնամյակներ շարունակ մեզանում արգելված էին հայդուկային (ֆիդայական) ընդհանուր անվամբ հայտնի երգերը: 1960—70-ական թվականներին բուն Հայաստանում դրանք կատարվում էին, սակայն ոչ պաշտոնական միջավայրում: Վերոհիշյալ երգերը հիշվում և հազվադեպ կատարվում էին նաև Ղարաբաղում, և դրա համար բավարար պատմամշակութային հիմքեր կային: Արևմտահայ եղբայրներին օգնելու նպատակով «երկիր» մեկնած հայդուկների մեջ ազգային թիվ էին կազմում զարաբագիները, որոնք գործն ու ողբերգական վախճանը խոր ազդեցություն էին թողել ժողովրդի հիշողության մեջ ինչպես հայրենիքում, այնպես էլ վերջինիս սահմաններից դուրս: Այդ անհատների վերաբերյալ երգերն ու հուշերը, յնայած քաղաքական-վարչական արգելքներին, կենդանի էին ժողովրդի հավաքական հիշողության ժալքերում, ժամանակ առ ժամանակ հառնում, վերածնվում էին: Անհրաժեշտ էր մի փոքր իմիջան, և այդ իմիջանը 88-ի փետրվարին սկսված ազատագրական շարժումն էր:

Շարժման սկզբնական փուլում, երբ հույս վար սահմանադրական ճանապարհով լուծելու Ղարաբաղի հարցը, երգվում էին հին երգեր: Պատմական հայտնի անհատ հերոսներին նվիրված ստեղծագործությունները միանգամայն համապատասխանում էին ժամանակի ոգուն: Նոր հերոսներ ասպարեզում տակավին չկային: Այս շրջանում կենցաղավարող նորաստեղծ երգերից է «Հայաստան» վերնագրով հորինվածքը: Այն պարզ, անպաճույճ մի երգ է, իշխող մեծ ոյրորտին միանգամայն համահունչ, կոչ-հորդոր վերադառնալ հայրենիք, շնորհվել ընտրած ուղուց, շփոթներ հույսն ու հավատը:

Վերադարձիր, մայրիկ իմ Հայաստան,
Լսիր իմ լույցը, կարոտ եմ քեզի,
Ծա սպասում եմ քեզ արդեն շատ տարի,
Վերադարձիր, սիրելի իմ մայրիկ:

1 Ա. Ղազիյանի 1989 թ. գործերում: Ա. Ղազիյանի 1988—1995 թթ. գործերում գրառումները պահվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (այսուհետև՝ ՂԳ և գործերում թվականը):

«Հայաստանը» հաճախ էր հնչում Ստեփանակերտի հրապարակում, հասարակական վայրերում, հավաքույթներում: Իր տրամադրությամբ այս երգին արձագանքում էր «Հայեր, միացե՛ք» ստեղծագործությունը, որը լայն արձագանք ունեցավ ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ Ղարաբաղում: Ազատագրական պայքարի առաջին խսկ օրերից մեծ ժողովրդականություն էր վայելում «Արդյոք ովքե՞ր են» երգը, որը երկրամասում ուներ իր տարբերակն ու նաև պարոդիան:

Ղարաբաղցիների արդարացի պահանջն աստիճանաբար վերածվում է հայ-թուրքական զինված հակամարտության: Տակավին ազատագրական պայքարի սկզբում իրատես, ողջամիտ մասնակիցներից շատերը զինված պայքարը համարում էին անխուսափելի: Եվ որոշ նախապատրաստություններ տեսան հայրենի օջախն ու իրենց ընտանիքները պաշտպանելու համար: Ինքնաշեն զենքերով զինված Ղարաբաղցիների դիմաց կանգնած էին մարտական կազմավորումներ և մինչև ատամները զինված թուրք օմոնականներ: Կռիվն անհավասար էր, սակայն Ղարաբաղցիներն աներեր էին: Վերջիններիս օղնուխն եկան մի շարք կամավոր ջոկատներ, անհատներ՝ մայր հայրենիքից ու սփյուռքից: Զինված ընդհարումների ժամանակ կատարվում էին անօրինակ սխրագործություններ, զոհվում, բայց անկոտրում էին մնում հայրենիքի պաշտպանությանը նվիրված բազմաթիվ անձինք: Ահա այս պարագաներում իրական կյանքում ու ժողովրդական պատկերացումներում ծնունդ է առնում ու կազմավորվում նոր ժամանակների ֆիդայու բանահյուսական կերպարը, որը, փ տարբերություն անցյալի՝ ֆիդայի կամ հայդուկ անվանյալ նմանաբանությամբ հերոսի, կրում է ֆիդային անունը:

Ղարաբաղի ժողովուրդը բազմաթիվ երգեր է հորինել սիրելի հերոսների մասին և հատկապես նրանց, ովքեր իրենց երիտասարդ կյանքը անմեայցորդ, անվարան դրեցին հայրենիքի պաշտպանության զոհասանդանին: Այդպիսի հերոսներից է Արմեն Մելքումյանը: «Ամարաս ձորի քաջ ֆիդայիներ» երգը նվիրված է Մաճկալաշենի ինքնապաշտպանության ջոկատի կազմակերպիչ ու առաջին հրամանատար Ա. Մելքումյանին: Ա. Մելքումյանը ազատագրական շարժման գործում մասնակիցներից է, զինված ինքնապաշտպանության ջատագով ու ոգեշնչող: Մաճկալաշեն գյուղը գտնվում է ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող դիրքում: Գյուղի գրավումը թուրքներին առաջ կբացեր ողջ Մարտունու շրջանի դռները: Ա. Մելքումյանը, նրա ջոկատը քաջ գիտակցում էին այդ հանգամանքը: Թեև ուժերն անհավասար էին, սակայն ջոկատը դիմադրում էր, կասեցնում թշնամու հարձակումները: Զոկատի անդամների մեծ մասը զոհվեց: Ինքնապաշտպանական կռիվների ժամանակ՝ 1992 թ. հոկտեմբերի 7-ին զոհվում է նաև հրամանատարը:

«Ամարաս ձորի քաջ ֆիդայիներ» երգը վուժ է՝ ուղղված Ա. Մելքումյանի գինակիդ ընկերներին՝ շարունակելու սկսած սուրբ գործը, հաղթական ավարտին հասցնելու այն:

Դե, եկե՛ք, եկե՛ք,
Հավաքվե՛ք, առաջ,
Նախկին տղաներ
Մարտերում կռիված²:

Երգում անվերապահ մատահանություն է արտահայտվում ազատագրական պայքարի առաջին շրջանի ազատամարտիկների նկատմամբ: Ողբերգականության մեջ համակված կրկնակի տողերը.

Ա՛խ, Արմեն, Արմեն,
Հարազատ քնկեր,
Թուրքի զնդակով
Սպանված ընկեր³:

² ԳԳ, 1995:

³ Նույն տեղում:

Երգի սուլն տարբերակը գրի է առնված՝ Աշան գյուղում (Մարտունու շրջան)։ Անադոլոն ախն վերագրում է Աշանի ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար, 1992 թ. մայիսի 15-ին Գյուլափաղի մոտ զոհված Արմեն Ավագյանին, թեև երգի վերնադիրը հստակ հուշում է տեղավայրը։ Ղարաբաղում Արմեն անունով հերոսները շատ են (Արմեն Հայրապետյան, Արմեն Գասպարյան, Արմեն Ավագյան), և նույն հաջողությամբ երգը կարելի է կապել նրանց անվան հետ։

Ղարաբաղում ժողովրդական երգերի հորինման համար հիմք են ծառայել նաև Աշոտ Ղուլյանի սխրագործությունները։ Ա. Ղուլյանը հայտնի է գերազանցապես իր մականվամբ՝ Բեկոր, Օսկոլկա (Осколка)։ Հերոսի մականվան ծագման վերաբերյալ կան հետևյալ վարկածները։ Նախքան Ղարաբաղում ռազմական գործողությունները սկսվելը, Եղվարդում (Հայաստան) ինքնաշեն զենքի փորձարկման ժամանակ նռնակը պայթել է, և Ա. Ղուլյանը վիրավորվել է նռնակի բեկորներից, որոնք մնացել են նրա մարմնում։ Ամեն անգամ օդանավակայաններում ստուգման ժամանակ բեկորներն իրենց ներկայությունը զգացնել են տվել, անգամ բոլոր մետաղյա իրերը նրանից վերցնելուց հետո⁴։ Իսկ մյուս վարկածի համաձայն, Ա. Ղուլյանը մարտերի ընթացքում, որոնց նրա հրամանատարությամբ կոպող առաջին վաշտը ունեցել է ամենագործուն մասնակցություն, բազմիցս վիրավորվել է և երբեք չի բուժվել, նրա մարմնում մնացել են բեկորներ, մնացել են մինչև նրա հերոսական կյանքի վախճանը։ Ա. Ղուլյան-Բեկորը զոհվել է 1992 թ. օգոստոսի 24-ին Դրմբոն գյուղի համար մղվող մարտերում։ Նրա աճյունը հանգչում է Ստեփանակերտի քաղաքային՝ այժմ Բեկորի անվան պուրակում (նախկին Կոնսյանցի անվան)։

Խիզախություն, անկոն կամքի, հայրենասիրության գովք է Բեկորին նվիրված երգը։ Հերոսը երգում համեմատվում է քաղվածյան խորհրդանշանը՝ արծվի հետ։ Նա անպարտելի է, տոգորված է հաղթանակի, անպարտելիության հավատով։

Գալիս է ահա արծիվ Բեկորը՝

Առաջին վաշտի հրամանատարը քաջ,

Որքան էլ քաջ լինեն թուրքերը,

Նա պիտի հաղթի, նա չունի նահանջ⁵։

Հիրավի, առաջին վաշտը իր մարտունակությամբ, բացառիկ հայրենասիրությամբ, խիզախ ու անձնագուհ զինվորներով աչքի է ընկել բազմաթիվ մարտերում։ Բեկորի մասին հուշապատումները, զրույցներն ու նրան ճանաչողների վկայություններն ամբողջացնում են նրա՝ հայ մարդու, զինվորի ու հրամանատարի ազնվական կերպարը։ Ժողովրդի հիշողության մեջ, ինչպես որ իրական կյանքում է եղել, նա մնում է արդարամիտ, խստապահանջ՝ իր ու շրջապատի հանդեպ, ուղղամիտ ու պարզ՝ կենցաղում, ճարպիկ ու հնարամիտ՝ մարտերում, հմուտ զինագործ, անսահմանորեն նվիրված հայրենի հողին՝ Ղարաբաղ աշխարհին։

Ղարաբաղյան ազատամարտի նշանավոր հերոսներից է Մոնթե (Ավո) Մելքոնյանը։ Մի շարք երգեր են հորինվել այս աննկուն զինվորի, խիզախ հրամանատարի ու մեծ հայրենասերի մասին։ ԼՂՀ Մարտունու շրջանի բանակայական կենցաղը 90-ականի սկզբներից ցարդ տոգորված է նրան նվիրված երգերով, նրա մասին զրույցներով, նրա ասույթներով։ Եվ այդ բոլոր ստեղծագործությունների կենտրոնում Մոնթեն է, նրա նկատմամբ ժողովրդի հիացմունքն ու պաշտամունքը։

⁴ Մ. Ս ա Ր Ե Ն Յ, Բեկոր, Երևան, 1993, էջ 23—24։

⁵ Նույն տեղում, էջ 6։

Մոնթեի մասին երգերը հորինվել են տակավին նրա կենդանության օրերին: Հատկապես երեխաների կատարումները նա ունենդրել է ժպիտով, թերևս հաճույքով, իսկ երգերին ընդհանրապես վերաբերվել է հումորով: Նրա գոհվելու փաստը հող է ստեղծել նոր երգերի հորինման համար: Մ. Մելքոնյանը ղոհվել է 1993 թ. հունիսի 12-ին, Մարզիու գյուղում, ցավալի հանսամանքներում, երբ հաղթանակն ապահովված էր, մարտը ավարտված, Մարցիուն ազատագրված:

Երգերում տեղ են գտել հերոսի կենսագրության որոշ փաստեր: Այսպես, շեշտվում է նրա սփյուռքահայ լինելու հանգամանքը.

Օտար երկրում ես ծնվել, իմ ընկեր,
Օտար արևն է գուրգուրել քեզի...⁶

Նա Ղարաբաղ էր եկել «արյան կանյոփ», «ետ վերդենիլու թուրքի զավթած հողերը», միավորելու, կազմակերպելու հայրենի երկրի պաշտպանությանը, ոգեշնչելու, հաղթանակների մղելու ազատամարտիկներին.

Նա եկավ ծանր պահին,
Երբ նեղում էր թշնամին,
Համախմբեց, ուժ տվեց,
Արցախն ամրոց դարձրեց⁷:

Մեծ է եղել Մոնթեի հրամանատարի դերն լեռնահանրապես Ղարաբաղի պաշտպանության գործում: Այն, որ Մարտունու շրջանը ոչ մի թիզ հող չգիջեց թշնամուն, գերազանցապես Մոնթեի ջանքերի շնորհիվ էր: Նա մասնակցել է Շուշիի ազատագրմանը, Քելբաջարի, Ֆիզուլու, Զանգելանի, Կուբաթլիի կռիվներին և լեռնահանրապես դարաբաղյան ազատամարտի բոլոր քիչ թե շատ նշանակալից ռազմական գործողություններին: Ներքոքերյալ հատվածի տողերը ճշմարտապատում են: Ափսոսանքով ու խոր վշտով է երգը արձագանքում հերոսի սպանությանը՝

Ավո ջան, Ավո,
Հերոս իմ սիրած,
Հոգուդ երազը
Անկատար մնաց⁸:

Մ. Մելքոնյանին նվիրված երգերի շարքում իր մշակվածությամբ, հրդեհվածությամբ շահեկանորեն աչքի է ընկնում «Զորավար Մոնթե» ստեղծագործությունը: «Մարաթուկ» համույթի տղաների ուժերով ստեղծված երգը Մոնթեի մասին հնչում էր ամենուրեք և միշտ ընդունվում ջերմությամբ ու խանդավառությամբ: Եվ ապա. «Ես իմ պարտքն եմ համարում Բեկորի մասին գրված գրքում անպայման տալ այդ երգի տեքստի իմ գրած տարբերակը»,—վկայում է «Բեկոր» գրքի հեղինակը⁹: Անաժից հետևում է, որ գոյություն ունեն տվյալ երգի այլ տարբերակներ ևս: Հորինված լինելով հերոսի մահվանից հետո՝ աբն իմացյալ մահի, հալոենասիրության, անձնագործության փառաբանություն է, ներբող.

Հայկազյան ոգիդ հեռու ափերից,
Քեզ Բերեց Արցախ, հողը պապերիդ,
Հողն այն ներկեցիր քո սուրբ արյունով,
Զոհվեցիր փառքով՝ վայել քաջերին¹⁰:

⁶ ՂԶ, 1994:

⁷ Նույն տեղում:

⁸ ՂԶ, 1995:

⁹ Մ. Սարգսյան, Բեկոր, էջ 77:

¹⁰ Նույն տեղում, էջ 78:

Ծրգը ոգեկոչում է Ավոյին՝ ելնելու թշնամու դեմ, մարտնչելու «սուրբ նպատակի» համար: Բնականաբար, հերոսը չի հառնելու. կոչը ուղղված է նրա զինակիցներին, զինվորներին:

Զա՛րկ, քաջ Մոնթե, զա՛րկ, թշնամին դողա,
Հայոց հաղթական սուրը շողշողա¹¹:

Ժողովրդական երգն արձագանքել է Ղարաբաղի ինքնապաշտպանության գործունե կազմակերպիչներին մեկի՝ նշանավոր հրամանատար Կոմանդոսի ռազմական սխրանքներին: Կոմանդոսը՝ Արկադի Տեր-Թադևոսյանը, երկրամասոսմ հայտնի ու սիրված անուն էր: Վիպական բանահյուսության ավանդներով է երգը ներկայացնում նրա գործունեությունը Ղարաբաղյան ազատամարտերի ընդհանուր պատկերում արժեքավորում, փնահատում է նրա դերը, թեպետ այստեղ առկա է նաև վիպական չափազանցություն:

Կենտրոնական շտաբը բաց է,
Կոմանդոսը մեջը նստած է,
Քարտեզը առաջը դրված է,
Ղարաբաղի հարցը լուծված է¹²:

Ծրդի արտահայտչամիջոցները, ոտանավորի շափը ակնհայտորեն իրենց զուգահեռներն ունեն անցյալի վիպական բանահյուսության, նմանաբնույթ երգերում («Լուսավ Մելիքի երգը»), իսկ ստորեկ բերվող քառատողը հիշեցնում է հանրահայտ «Հասան-Ղալան»:

Լավ ընկեր ջան, ես գնում եմ,
Ընտանիքս քեզ թողնում եմ,
Լավ կնայես բյուրիս բալիս,
Ինչ որ ուզի, չխնայես¹³:

Երկրամասի բանահյուսական կենցաղում տեղ են գտել ազատամարտին նվիրված ընդհանուր բնութթի հերոսական երգեր: Այդպիսի մի ստեղծագործություն է «Արցախի Ֆիդայիներին» երգը: Նորօրյա ֆիդայիներին հերոսական արարքների մղելու համար երգում ոգեկոչվում են ոչ հեռու պատմական անցյալի, ազատագրական պայքարի հերոսները՝ Սերոբ Փաշան, Անդրանիկը, Գևորգ Չավուշը: Ղարաբաղի վիճվորները նրանց պետք է նմանվեն, նրանց հավասարվեն: Եվ այդպիսիք են:

Ամեն մեկդ մի Գևորգ Չավուշ,
Մի Սերոբ փաշա, մի քաջ Անդրանիկ,
Պայքարի ելաք, առած սուրբ դրոշ,
Որ ազատ ապրեն ազգ ու հայրենիք¹⁴:

Ղարաբաղի հայոց ազատագրական պայքարի մասին երգեր են հորինվել նաև ուսներեն լեզվով: Այս երգերը հայերենների հետ միասին այսօր էլ երգվում են, սիրված ու տարածված են հատկապես քաղաքային միջավայրում: Այս երևույթը ծանոթ է հայ հոգևոր մշակույթի պատմությունից: Ղարաբաղում այն ունի ողորակի պատճառներ: Թուրք ջարդարարներից խուսափած հայ բնակչության մի խոշոր հատված ապաստան գտավ Ղարաբաղում, որը գերազանցապես ուսսախոս էր: Ռուսախոս էին նաև նախկին Միության տարբեր ծայրերից Ղարաբաղ եկած զգալի թվով հայ կամավորներ: Եվ

11 Նույն տեղում:

12 ՂԳ, 1995, Ե. Հարությունյանի գրառում:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում:

ընդհանրապես ռուսականի ազդեցությունը բուն Ղարաբաղում, մայրաքաղաք Ստեփանակերտում ակնհայտ իրողություն էր: Եվ ահա այս լեզվամշակութային միջավայրում էլ ծնունդ են առել ռուսալեզու երգերը: Վերջիններս մեղեդիական և լեզվատաղաչափական առումով կրում են ռուսական քաղաքային երգավեստի ազդեցությունը, սակայն բովանդակությամբ բուն հայկական՝ ղարաբաղյան ֆիդայական երգեր են՝ նվիրված հայտնի ու անհայտ զոհված հերոսների, կրկժանի, Զան-Հասանի, Շուշվա ազատագրման համար մղված կռիվներին: Ուսումնագու այդ երգերում հաճախ են հնչում ջոկատ, ֆիդային և հայերեն այլ բառեր, տեղանուններ, անձնանուններ՝ ստեղծելով որոշակի պատմական միջավայր: Ուսումնագու երգերը ևս փառաբանում են հերոսների անխնայությունները, անձնազոհությունը, հավատարմությունը, Ղարաբաղի ազատագրական պայքարի վերջնական հաղթանակը: Ահա մի օրինակ.

Я пишу письмо из Карабаха,
Дорогая, милая моя,
Защищать тебя до смерти буду,
Защищать тебя и наш Арцах¹⁵.

Մեր ժամանակներում հակամարտության գոտում դեմ դիմաց կանգնած թշնամի կողմերի միջև առկա են երևույթներ, որոնց արձատները՝ իրական ու բանահյուսական, տանում են դարերի խորքը: Թշնամիները խոստով են իրար հետ սպառնալիքներով, հայհոյանքով, նվաստացնող արտահայտություններով: Հայկական կուլմը թշնամուն այդ հաճախ մատուցում է երգով: Երգը ասվում է ռադիոբարձրախոսի միջոցով, սովորաբար նաև բարձրաձայն, որևէ համար դիրքից: Երգվում է թուրքերեն հանրածանոթ մի ստեղծագործություն, որը համեմատվում է սպառնալիքներով ու հայհոյանքներով թուրքական կողմը իր պարտությունների ու անափառության, պոռոտախոսության համեմատությունների միջոցով նսեմացվում, ծաղրվում է: Սակայն թուրք զինվորները, երգը լսելով, ընկալել են յուրովի, այսինքն՝ իբրև իրենց ազգային մեծ վշտի արտահայտություն ու երբեմն խնդրում էին երգել այն:

Արցախահայոց ազգային-ազատագրական պայքարն առավել լայն ընդգրկմամբ արտացոլվել է բանահյուսության արձակ-պատմողական ժանրերի ստեղծագործություններում՝ զվարճախոսություններում, զրույցնաձևում, հուշապատմություններում: Ժողովրդի կյանքում տեղի ունեցող բախտորոշ իրադարձություններն ընկալվել, իմաստավորվել են հումորի, զավեշտի ու ծիծաղի միջոցով: Զվարճախոսությունների գերակշիռ բաժինը վերաբերում է ժամանակակից հասարակական, քաղաքական ու ռազմական իրադարձություններին: Ժամանակագրական առումով զվարճախոսություններն ընդգրկում են ազատագրական պայքարի բոլոր փուլերը՝ միտինդյան շրջանից սկսած մինչև պայքարի կազմակերպված ռազմական շրջանը:

Թեմատիկ առումով դիտարկելով հավաքված, գրի առնված նյութը՝ կարելի է կատարել որոշ դասակարգում: Մի խումբ զվարճախոսություններ հորինվել են ժողովրդի խորթ, անմատչելի օտար հասկացությունների, բառերի յուրօրինակ ընկալման ու մեկնաբանության հենքի վրա: Առկա է նաև հակառակ երևույթ, երբ հայերեն բառերը շնչ ընկալվել ու այլազան մեկնաբանություն են ստացել օտարների կողմից: Էփտեմիստ բառը տգատագրական պայքարի սկզբնական շրջանում, իբրև ղարաբաղցիներին տրվող բնորոշում, գործածություն լայն շրջանակներ ունեցող մասսայական լրատվական միջոցների շնորհիվ: Ղարաբաղցու պատկերացմամբ այդ բնորոշումը հատուկ էր միայն ղարաբաղցուն: Եվ ահա մի փն հեռուստատեսությամբ

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, Ե. Հարությունյանի գրառում:

յսելով՝ հեռավոր մի երկրում գոյություն ունեցող չքստրեմիստների մասին՝ զարմանում և ուրախանում է՝ ասելով, թե աշխարհի ամեն անկյունում դարարողի կա¹⁷։ Մի այլ զվարճախոսություն մեջ, որի դիտավոր հերոսը ռուս լրագրող է, ադրբեջանական գյուղում լավ ծեծվելուց հետո, մոտենում է մի բնակավայրի, երևիսյից իմանալով, որ այդտեղ չքստրեմիստներ են ապրում, հանգիստ շունչ է քաշում¹⁸։ Այն հարցին, թե ինչպիսի՞նք երկրում ենք ապրում, կապիտալիստական, կոմունիստական, թե՞ դեմոկրատական, պատասխան է տրվում՝ չքստրեմիստական¹⁹։

Գործածության լայն շրջանակներ ունեւ միացում բառը։ Բառի ընկալումն ու բացատրությունը օտարների կողմից զվարճախոսությունների ստեղծման համար պարարտ հող է դարձել, ըստ որում, դրանք հասցնելով զավեշտի մակարդակի։ Խորհրդային քանակի զինվորը ադրբեջանական դյուզում լավ հյուրասիրվելուց հետո, երբ հրաժեշտ է տալիս հյուրընկալին, ասում է. «Ձեր պահանջն արդար է, սիրաշունչն անպայման կլինի»²⁰։ Այստեղ հերոսը շարքային զինվոր է։ Իսկ մի այլ դրվագում պատմվում է. Մոսկվայից Ղարաբաղ է դալիս բարձրաստիճան պաշտոնյա։ Երբ վերադառնում է մայրաքաղաք, ղարաբաղցիների պահանջներից այն մասին է պատմում, որ նրանք ուղում են ցույց (հանրախանութ) կառուցել, բայց թե որտեղ, ինքը չկարողացավ հասկանալ²¹։

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Ղարաբաղի խնդրով զբաղվող շարքային զինվորից մինչև ամենաբարձր պաշտոնյան այնքան են հեռու դրա լուծումից, որքան միացում բառի բուն իմաստը նրանց մեկնաբանությունից։

Արցախի բնակչության հիմնական մասը, փարած իր բարձր լեռներին, ապրում էր ներփակ կյանքով, տեղյակ չէր ռազմական տեխնիկայի նորություններին, զենքի տեսակներին, հասարակական կյանքի ինչ-ինչ երևույթներին։ Անգիտության, տեղեկատվության փացակալության պատճառով ևս ստեղծվում են ծիծաղաշարժ, զավեշտական իրադարձություններ։ Շահումյանցիները լուր են ստանում, որ Կոքսը դալիս է, և հարկավոր է դիմավորել։ Նրանք տեղ չգիտեն, թե ով է Կոքսը, և կարծելով, թե քարածուխ է դալիս, ավտոշարայուն կազմած զնում են կոքս բերելու²²։ Առկա են նաև բառերի ձևականորեն ճիշտ, սակայն իրադրությանը բոլորովին անհամապատասխան կիրառության հենքի վրա ստեղծված զվարճախոսություններ։ Շահումյանի շրջանի դյուզերից մեկում «Ալազանի» արկն լինում է խանութի մեջ։ Երկար ժամանակ փակ խանութը բաց տեսնելով՝ գյուղացիները կարծում են, թե ապրանք են ստացել։ Այդ մասին նրանց հարցին գործակատարը ձեռքը արկին դնելով պատասխանում է՝ «Հա, Ալազան եմ տալիս»²³։ Մի այլ սյուժեում գյուղացին, չիմանալով «Ջեմլյա-զեմլյա» զենքի արժեքը, ուրախանում է, քանի որ այդ զենքից մեկն ընկել է իր բանջարանոցում²⁴։

Ստվար խումբ են կազմում հասարակական-քաղաքական թեմայով հորինված զվարճախոսությունները։ Դրանցում դրսևորվում են ղարաբաղցիների շիտակ, անմիջական, ազնիվ ու ողջամիտ ընկալումներն ու վերաբերմունքը՝ զուգորդված լեռնցու համառության, տոկունության ու ինքնատիպության հետ։ Որոշ նմուշներ աչքի են ընկնում նույնիսկ կանխատեսումներով, ինչպես օրինակ, ներքոհիշյալը։ Այն հարցին, թե արդյո՞ք Ղարաբաղը կընդունեն ԱՊՀ կազմի մեջ, տրվում է հետևյալ պատասխանը. «Կարծես

17 Արցախ, 1989, թիվ 2—3, էջ 184։

18 Նույն տեղում։

19 Պրլը Պուդի, 1991, № 1, էջ 2։

20 Աշխատանք, 1990, № 43։

21 ՂԳ, 1990։

22 Եթերում է Երևանը, 1992, թիվ 4։

23 Նույն տեղում, թիվ 9։

24 Երկիր, 1993, № 201։

թե չեն ընդունելու, երկրամասի ղեկավարներից ոչ մեկը քաղաքացիության անդամ չի եղել»²⁵, թե ինչու չեն ինչն ու Ստալինը Ղարաբաղը տվին Ադրբեջանին, տրվում է պատասխան՝ «Որպեսզի Գորբաչովի ոտի տակը բանդեն»²⁶, քաղաքական կյանքի մի բնորոշ հատկանիշ է ակնարկում հետևյալ այտուցն, Աղատ ու ապահով կյանքով ապրելու բաղձանքից զատ այլ մտահոգություն չունեցող Ղարաբաղցի կիներ, իմանալով հանքափոր-ածխահատների զործադուլների մասին, զարմացած հարցնում է. «Թե մրա՞նք ում են ուղում միանալ»²⁷, Իսկ մի այլ զվարճախոսություն ներկայացնում է հետևյալ դրվագը. Թոռան հարցին, թե աղո՞ղո՞ք մերոնք կստորագրեն միութենական պայմանագիրը, պապիկը պատասխանում է. «Ե՛հ, մյուսներն ինչ ուզում են, թող անեն, պրծավ, սպանեն էլ՝ ես չեմ ստորագրելու»²⁸, Հասարակ մարդու, տվյալ պարագայում՝ ժեր Ղարաբաղցու համար կարևորը իր աղատության, իր կողմնորոշման հարցն է, զանազան պայմանագրերն ու դաշնագրերը նրա համար սոսկ թղթի կտոր են:

Նշեցինք, որ հարեմիքը գնքով պաշտպանելու պատրաստ հպարտ ու արիասիրտ ռազմիկի՝ Ֆիդայու կերպարը մոտեք զործեց բանահյուսական կենցաղ՝ երգարվեստ, նաև զվարճախոսություններ: Ֆիդայի անունն ու անվան կրողները դարձան պաշտամունքի առարկաներ: Ամուսնու հարցին՝ երեխան տղա է, թե՞ աղջիկ, կինը ծննդատան պատուհանից պատասխանում է՝ Ֆիդայի է, Ֆիդայի՝...²⁹:

Հետզհետե ինքնապաշտպանական, պարտիզանական կու՛մները փոխարինվեցին լայնամասշտաբ մարտերով, զինված ջոկատները՝ կազմակերպված, կանոնավոր զորամիավորումներով, Ֆիդային՝ ազատամարտիկով, զինվորով: Այս անցումն իր անդրադարձն ունեցավ զվարճախոսություններում: Նորաստեղծ նմուշները վերաբերում են բանակային առօրյային, լինվորի ու նրա շրջապատի փոխհարաբերություններին, առավելապես բացասական երևույթները դարձնելով ծիծաղի, հումորի խնդիր, ինչպես օրինակ, հրամանատարների տգիտությունը, հարեցողությունը, կոպտությունը, անբանությունը, զինվորների անդրագիտությունը, ընտանեկան ու տիրո հարցերը, զորանոցների աղտոտությունը, սննդի պակասությունը և այլն: Բանակում «պրապորշիկներին» խավը հատուկ տեղ է զբաղեցնում: Զինվորների վերաբերմունքն այդ խավի հանդեպ ավանդականորեն բացասական է: Հեռվում աշխատող մի խոճմբ զինվորների մեջ երգիծական հեքոսը ճանաչում է պրապորշիկին: Այն հարցին, թե ինչպե՞ս ճանաչեց ավագին, պատասխանում է. «Նա է, ով չի աշխատում»³⁰: Այն բանից հետո, երբ պրապորշիկը պարզում է, թե ում ամիսմատն է կեղտոտ, հրամայում է. «Տիրոջը՝ Կալաշնիկովին, զրկել արձակուրդից», չիմանալով, որ Կալաշնիկովը հրազենի հեղինակն է³¹, Զինվորը, տասը օր բանտարկված լինելով, չի իմանում պատճառը: Ընչերոջ հարցին, թե ինչո՞ւ է քանտարկվել, ասում է՝ «Տասն օրից հինգը հենց լինելու հարցի համար»³²:

Ղարաբաղյան բանակի զինվորները մեծ մասամբ աշխարհազորայիններ էին, հատկապես սկզբնական շրջանում: Զենքի ոչ թուղր տեսակներն էին նրանց հայտնի, վարվելու եղանակը չգիտեին: Ահա այս անգիտությունից ստեղծվում էին զավեշտական իրադրություններ՝ նաև ողբերգական հետևանքներով: Զինվորը փորձում է քանդել չպայթած ականը: Ընկերոջ նա-

25 Խալին, Բուրուլը և ուրիշները, Ստեփանակերտ 1994, էջ 3

26 Նույն տեղում, էջ 31:

27 Արցախ, 1989, № 2—3, էջ 184:

28 Խորհրդային Ղարաբաղ, 1991, № 61:

29 Արցախ, 1989, № 2—3, էջ 184:

30 Խալին, Բուրուլը և ուրիշները, էջ 10:

31 Նույն տեղում, էջ 2:

32 Նույն տեղում, էջ 2:

խաղաղությանը նա հանգիստ պատասխանում է, որ ինքը դրանից մեկն էլ ունի⁸⁸,

Բանակը ևս դերժ է կենցաղային դժվարություններից, որոնք նույնպես նյութ են տվել զվարճախոսություններին: Նորակոչիկի հարցին, թե լավ են կերակրում վաշտում, հին զինվորը պատասխանում է. «Ինչ ուզեցե՞ք»⁸⁹:

ԼՂՀ բանակի զինվորը հպարտ է, ինքնավստահ, գիտակցում է իր առավելությունը թշնամու նկատմամբ: Այդպիսին լինելու համար նա հիմքեր ունի: Սակայն որոշ դեպքերում նա դառնում է պարծենկոտ, արժանապատվությունը փոխակերպվում է ինքնագոհության: Որդու հարցին. «Թե ո՞ւմ զորքն է ստվարաթիվ՝ հայերի», թե՛ թուրքերի, զինվոր-հայրը պատասխանում է. «Մարտից առաջ թուրքերի, մարտից հետո՝ հայերի»⁹⁰: Այն հարցին, թե զինվորը գիտե՞ թուրքերին, նա պատասխանում է. «Իհարկե, ձեռքերդ վեր (աւլյարըն յուխարը)», ինչ աղբյւրն էլ բավական է⁹¹:

Ավանդական զվարճախոսություններին բնորոշ կառուցվածքը՝ երկխոսություն հարց ու պատասխանի ձևը նոր ստեղծագործություններում ևս պահպանվում է: Հայտնի Պըլը Պուղի-Մելիք Շահնազար զուգի հետ միասին հանդես է գալիս նոր զուգ՝ հաշի և Բուբուլյ: Պըլը Պուղին առավելապես ազգային-հասարակական, խոհական գծերով օժտված զվարճախոս է: Խաշի-Բուբուլյ զուգը կրում է զինվորի համազգեստ: Զուգի շոշափած թեմաները վերաբերում են գերազանցապես բանակային կյանքին: Ըստ էության, հաշին ու Բուբուլյն միևնույն կերպարն է, որ քացահայտվում է հարց ու պատասխանի միջոցով:

Յուրաքանչյուր ազգագրական շրջանի բանահյուսության համ ու հոտ է հաղորդում նրա բարբառը: Զվարճախոսություններին դա վերաբերում է առավելագույնս: Ղարաբաղի նոր շրջանի զվարճախոսություններին ժխտաշարժություն մի յուրահատուկ երանգ է հաղորդում ուսուներեն բառերի գործածությունը: Բանակի անձնակազմը, ուսուական տեխնիկան Ղարաբաղ է մտել ուսուական անվանումներով: Եվ ահա, բարբառի ու ուսուներենի խառնուրդը ստեղծում է զավեշտական իրադրություն: Խրամատ փոքր զինվորը հարց է տալիս.

— Պարոն ստարշինա, էս տրանշեյը մինչև շտե՞ղ բիդի քանդինքս:

— Էս ծառան մինչև... աբեդ (одед), — լինում է պատասխանը⁹²:

Հետաքրքիր երևույթ է դիտվում զվարճախոսությունների կենցաղավարման ասպարեզում: Տպագիր աղբյուրների միջոցով գրական շրջանակներում ստեղծված զվարճախոսությունները թափանցում են ժողովրդի կենցաղը: Նույնը վերաբերում է նաև թարգմանական ստեղծագործություններին: Բնականաբար, այն սյուժեները, որոնք համապատասխանում են ժողովրդի ճաշակին, ժամանակի ոգուն, շուտով ստանում են բանահյուսական բնույթ, ձուլվում բուն ժողովրդական ստեղծագործություններին: Եվ ընդհանրապես, ժողովրդի մշակութային միջավայրում ստեղծված զվարճախոսությունները գրի են առնվում, հաճախ անմշակ, երբեմն մշակված տեսքով հրատարակվում ու թափանցում գրական միջավայր: Այս փոխներթափանցմանը նպաստում են հատկապես «Արցախ», «Պըլը Պուղի» հանդեսները, «Մարտիկ», «Ղարաբաղի Հանրապետություն» (այժմ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն») և երկրամասի այլ թերթերը:

Ժողովուրդը տեղի ունեցող բախտորոշ իրադարձություններին արձագանքում է ոչ միայն երգերով, հումորի ու ծիծաղի միջոցով: Շարժման հենց

⁸⁸ Երկիր, 1993, № 201:

⁸⁹ Խաշին, Բուբուլյ և ուրիշները, էջ 13:

⁹⁰ Երկիր, 1993, № 201:

⁹¹ Խաշին, Բուբուլյ և ուրիշները, էջ 2:

⁹² Մարտիկ, 1993, № 27:

ռոց դեպքերը, անօրինակ սխրագործությունները, հավատարմության ու սիրո բացառիկ դրսևորումները, հանդուգն ու հնարամիտ արարքները: Այսպես, զրույցներ են պատմում վիրավոր ընկերոջը կրակի տակից կյանքի գնով փրկելու, հիվանդանոցից վիրավոր ազատամարտիկին զինված պահակների քթի տակից փախցնելու, հսկիչ կետերով ճարպկորեն զենք տեղափոխելու, վերջին մարտի նախօրյակին ազատամարտիկների նախազգացումների մասին: Ըստ մի զրույցի, կարճ ժամանակով արձակուրդ տուն վերադարձած զինվորը կրկին ճակատ մեկնելուց առաջ սեղան նստած մտերիմների պատգամում է. «Բան է, եթե ես չվերադառնամ, իմ կենացը կխմենք բաժակ բաժակի խփելով»: Նա մեկնում է և զոհվում հենց նույն օրը: Մի այլ հուշ-զրույց հայտնի նշանառու Մարգարիտ Սարգսյանի մասին հետևյալն է հաղորդում: Վերջին մարտից առաջ նա չի կարողանում լզալ տուն, մորը հրաժեշտ տալ: Կեսգիշերին զանգահարում է հարևանուհուն և խնդրում կանչել մորը, ասելով, թե մարտի գնալուց առաջ ուզում է լսել մոր ձայնը:

Հուշապատումները, վկայությունները մեծավ մասամբ վերաբերում են ղոհված ֆիդայիների, ազատամարտիկների կենսագրության այս կամ այն փաստին, բնավորումները, վարքագծին: Մարտունու շրջանում հատկապես Մոնթեի մասին պատմվում են բսղմաղան հուշեր, զրույցներ: Այնքան մեծ է նրա հմայքը, որ Ավո-Ավետիք անունով երեխաների թիվը Մարտունիում օրեցօր ավելանում է: Ամենից առաջ ժողովրդին տիրելի է եղել նրա շիտակությունը, արդարամտությունը, համեստությունը: Մի անգամ Մոնթեն մըրանում է գումարտակի ճաշարան: Նրա դեմ դնում են ձվերով լի ափսեն: Երբ նա հարցնում և իմանում է, թե փինվորներին թանի ձու են տվել նախաճաշին, կարգադրում է փր համար թողնել նույնքան, մնացածը տանել: Ըստ հուշերի, նա հոգում էր առաջին հերթին դիրքերում կանգնած զինվորների կարիքները: Երբեք իրեն չէր առանձնացնում շարքային զինվորից: Հիրավի, բոլոր լուսանկարներից, տեսաժապավեններից մեղ է նայում պարզ, հասարակ համազգեստով ազատամարտիկ-հրամանատար Մոնթե-Ավոն:

Վերջին 8 տարիների ընթացքում հավաքած բանահյուսական նորաստեղծ նյութերի համառոտ տեսությունը վկայում է ղարաբաղյան ազատագրական պայքարն արտացոլող նմուշների լայն կենցաղավարման ու ժողովրդականության մասին: Այնպես, ինչպես պայքարն է բխել ժողովրդի հավաքական ազատատենչ ոգուց, այնպես էլ հոգևոր մշակույթի տվյալ բնագավառը համահունչ է նրա գաղափարներին ու իդեներին:

ОТРАЖЕНИЕ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В УСТНОМ НАРОДНО-ПОЭТИЧЕСКОМ ТВОРЧЕСТВЕ КАРАБАХЦЕВ

А. С. ГАЗИЯН

Р е з ю м е

Карабахское освободительное движение оказало глубокое влияние на все стороны жизни карабахцев, в том числе на устное народное поэтическое творчество.

В рамках традиционных жанров в фольклорном быту карабахцев на первый план были выдвинуты произведения, связанные с освободительным движением, имеющие судьбоносное значение для края. Широко распространились, в частности, рассказы, анекдоты, воспоминания, песни. В них освободительное движение отразилось со всеми своими особенностями, в процессе, поэтапно, начиная с митингового этапа до организованной вооруженной борьбы.

В настоящее время широко бытуют песни, рассказы, воспоминания (посвященные героям борьбы, отдельным ярким эпизодам войны, сражениям), а также анекдоты о рядовых солдатах армии НКР.